ԱՐՏԱԳԱՂԹԻ ԹԵՄԱՆ ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

20-րդ և 21-րդ դարերի հատույթում բեկումնային իրադարձությունները հայ կյանքում մեծապես հարստացրին մամուլի պատմությունը հրապարակախոսական ուշագրավ էջերով:

Այսպիսի ժամանակահատվածի համար բնորոշ է Գ.Անանյանի մեկնաբանությունը. «Հասարակությունների կյանքում լինում են պահեր, երբ հրապարակախոսությունն ու ժուռնալիստիկան այնքան են մերձենում, որ գրեթե նույնանում են: Այդպես լինում է մեծ հեղաբեկումների նախօրյակին»[1]:

Անշուշտ, մամուլն այն կարևոր հանգույցներից էր, որ պետք է իր վրա պատասխանատվություն վերցներ՝ օբյեկտիվորեն ներկայացնելու իրականությունը և լուծման ուղիներ առաջադրելու: Հրապարակի վրա եղած գրական պարբերականները, պարզ է, չէին կարող անմասն մնալ երկրի առջև ծառացած խնդիրներից, որոնցից մեկը՝ արտագաղթը, միշտ էլ եղել է հայ իրականության ցավալի էջերից:

Դեռ 1992թ., երբ անկախության հաստատումից անմիջապես հետո պարզ դարձավ, որ ժողովրդի կյանքը մեկ օրում չի փոխվելու և դեռ զոհեր ու կորուստներ պետք է ունենանք՝ ազատության ճանապարհը հարթելու համար, բարձրաձայնվեց ազգակործան երևույթներից մեկի՝ արտագաղթի հնարավոր ծավալման մասին, ինչն իսկապես վտանգավոր էր: Հրապարակագիրներից մեկի խոսքով՝ «Երկրի քայքայման և ավարտման առաջին պայմանը արտագաղթն է, ոչ թե հեղափոխությունը կամ պատերազմը»[2]: Ահազանգողները մարգարեացան: Արտագաղթը 90-ականների սկզբից սկսած, ի թիվս այլ խնդիրների, դարձավ մեր հանրության գլխավոր մտահոգություններից մեկը, և որքան էլ դժվար է ընդունել, տարիների հետ այն ոչ միայն նվազում է, այլև ժամանակ առ ժամանակ նոր թափ է առնում: Պատահական չէ, որ գրական տարբեր պարբերականներ մեծ տեղ են հատկացնում այս երևույթը քննարկող հրապարակումներին: Սրանցում նախ և առաջ ներկայացվում են արտագաղթի հիմնական պատճառները, այն է՝ սոցիալական, տնտեսական, բարոյահոգեբանական,

---

[1] Ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր), Պրակ Ա, Ե., Երևանի համալս. հրատ., 1999թ., էջ 10:
[2] Հուսիկ Արա, Կալիգուլա. տերը սեփական երկրի, «Գարուն», 2005թ., թիվ 1, էջ 46:

մասնավորապես հուսալքությունը, հավատի կորուստը երկրի, իշխանությունների և ապագայի նկատմամբ:

Առաջին երկու պատճառները հիմնականում բնորոշ են անկախության վաղ շրջանին, երբ՝ «Անզուսպ պատերազմ հայտարարվեց պետական-համաժողովրդական սեփականության դեմ... Առաջին սեփականատերերը դարձան նախկին իշխանավորները», ինչի անմիջական արդյունքում տեղի ունեցավ հասարակության բևեռացում. մի կողմում «հափշտակիչ-ունևորներն էին», մյուս կողմում՝ «հարյուր հազարավոր ընչազուրկներն ու աղքատները»[3]: Սակայն այս պայմաններում էլ իշխանությունների սխալ քաղաքականությունը, ըստ Կ.Խոդիկյանի, Ազատության հրապարակում բռունցք դարձած և առանց երկմտանքի «Այո» ասած մարդու համար վիրավորական էր, ինչն էլ հեռանալու պատճառ է դառնում[4]:

Հետագա տարիներին արդեն, երբ որոշ չափով բարելավվում է ժողովրդի կենսակերպը, այլ հիմնախնդիրներ են դառնում արտագաղթի պատճառ: Սեփական երկրում իշխանավորների կողմից անտարբեր և հաճախ արհամարհալից վերաբերմունքը, բյուրոկրատական քաշքշուկները շատ դեպքերում հող էին նախապատրաստում, որպեսզի անհատը հոգեբանորեն ճնշվի և մտածի՝ «...գնամ, սրանցից ազատվեմ»[5]: Եվ արդյունքում կորչում է մարդկանց հավատը, հույսը. «Այսօր Հայաստանի քաղաքացին չի հավատում անգամ իր երկրում բարձրացող պատին, փռվող ասֆալտին...: Մենք չենք հավատում մեր կերտած պետականությանը, ձեռք բերած անկախությանը, հաղթած պատերազմին»[6]:

Այս հոդվածներում վերհանվում են նաև հատկանշական մի քանի երևույթներ.

1. «... ինչքան փախստական հայեր մեկ անգամ ևս դարձան փախստական ու եթե առաջին անգամ թշնամու երկրից հեռացան, այս անգամ դռան ճանապարհը սառնասիրտ ցույց տվողը նախնիների երկիրն էր»[7]: «Գարուն»-ը իր կայուն խորագրերից մեկի ներքո՝ «Երևան 15, Գր.Լուսավորչի 15», հրապարակում է վերը նշվածի արձագանքը. եկել են Բաքվից, ամուսինը ուներ աշխատանք, սակայն հեռացրել են, որովհետև նրա տեղում ՀՀՇ-ական պետք է նշանակվեր: Այս դեպքում եթե միակ փրկությունը արտագաղթը չէ, ապա ելքերից

---

[3] Ռ.Կարայան, Ամա՞ռն էլ՝ ծմեռ, սա՞ է կյանքը մեր..., «Գրական թերթ», 2008թ., թիվ 1:
[4] Կ.Խոդիկյան, Եթե հեռանալն է փրկություն, «Գարուն», 1993թ., թիվ 3, էջ 22:
[5] Մետաքսե, Արտագաղթ. ինչո՞ւ և մինչև ե՞րբ, «Գարուն», 2001թ., թիվ 9, էջ 30:
[6] Հուսիկ Արա, Կալիգուլա. տերը սեփական երկրի, «Գարուն», 2005թ., թիվ 1, էջ 46-47:
[7] Կ.Խոդիկյան, Եթե հեռանալն է փրկություն, «Գարուն», 1993թ., թիվ 3, էջ 23:

մեկն է: Եվ ամենացավալին այն է, ըստ հոդվածագրի, որ «... երեխաները ռուսական դպրոց են գնում և խոսում ռուսերեն»: Իսկ Հայաստանի հետ կապող օղակը միայն ծնողներն են, երբ նրանք էլ տեղափոխվեն, Հայաստանը այդ ընտանիքի համար կդառնա ընդամենը աշխարհագրական անուն[8]:

2. «Ազգը կերակրող գյուղացին է լքում հողը»[9], այդ թվում, իբրև անմիջական հետևանք, դատարկվում են սահմանամերձ գյուղերը: Տրոհվում է ոչ միայն ազգը, այլև հայ ընտանիքը:

3. Երկրում պակասում է ժողովրդի հոգևոր հարստությունը, հեռանում են լավ մասնագետները, մտավորականները: Այս դեպքում, բացի ներքին պատճառներից, ընդգծվում է նաև արտաքին դիվանագիտությունը: Տարբեր երկրներ, շահավետ պայմաններ ստեղծելով երիտասարդների ուսումնառության համար, հաճախ հող են նախապատրաստում՝ հեռանալու երկրից: Խնդրով մտահոգ հրապարակախոսները, որոնք, բացի վտանգի ահազանգը հնչեցնելուց, նաև ելքի ուղիներ են փնտրում, այս դեպքում կարևորում են հոգենաբանական գործոնը՝ իբրև արտագաղթը կանխարգելող միջոցներից մեկը: Ա.Սահինյանն իր հոդվածներից մեկում անգամ այս խնդիրը դնում է դպրոցի առջև, ցավով նշելով, որ ներկայումս՝ «... նրանք պատրաստում են աշխարհաքաղաքացի, դպրոցն ավարտելուց հետո քամին ուր կքշի, այնտեղ էլ կգնաս՝ աֆրիկյան, թե ամերիկյան երկրները, միևնույնն է ուր և ինչով կզբաղվես ու կապրես, կգնաս առանց ետ նայելու»[10]: Ու թեև հայտնի է, որ ուր էլ հայտնվում են հայերը, ստեղծում են իրենց եկեղեցին, դպրոցը, հիմնում կուսակցություններ և պարբերականներ, սակայն այդ ամենը բավարար չէ լավատես լինելու համար: Հայապահպանությունը օտար երկրում արդյո՞ք երկար կարող է դիմանալ քննությանը: Եթե ոչ առաջին, երկրորդ սերունդներին, ապա այդուհետ եկողներին, թերևս, քիչ բան կկապի իրենց անցյալի, պապերի ու պապենական երկրի հետ:

Եվ այս ամենը շատ դեպքերում հիմք է տալիս հրապարակախոսներին պանդխտությունը համեմատելու եղեռնի հետ. «Արտագաղթը հայ ժողովրդի համար նույն այն երևույթն է, որը ժամանակին Պ.Սևակն անվանել է սպիտակ եղեռն: Արտագաղթը հայի սպանդն է»[11]: Ըստ «Լիտերատուրնայա Արմենիա»-ի հրապարակագրի ևս՝ դարասկզբի եղեռնը հայ ժողովրդի նկատմամբ շարունակվում է նաև այսօր՝ իբրև «սպիտակ եղեռն»[12]: Այս դեպքում մեղադրվում են

---

[8] «Երևան 15, Գր.Լուսավորչի 15», «Գարուն», 1994թ., թիվ 4, էջ 27:
[9] Ս.Չիլինգարյան, Խաղաղ եղեռն, «Գարուն», 1999թ., թիվ 2, էջ 15:
[10] Ա.Սահինյան, Ապրել առանց պրոբլեմների, «Գարուն», 1997թ., թիվ 2, էջ 6:
[11] Ս.Մալխասյան, Արտագաղթ. ինչո՞ւ և մինչև ե՞րբ, «Գարուն», 2001թ., թիվ 9, էջ 29:
[12] Ռ.Բաղդասարյան, Որտեղ հաց, այնտեղ կաց, «Լիտերատուրնայա Արմենիա», 2003թ., թիվ 1, էջ 147:

ոչ թե օտարները, այլ հենց հայն ինքը. «Հայրենիքն այսօր վտանգի մեջ է, և անչափ ցավալի է, որ այդ վտանգը այս անգամ ոչ թե երիտթուրքերի ձեռքով է ստեղծված, այլ երիտհայերի»[13]: Եվ եթե հայոց ցեղասպանության համար հայերը վրեժխնդիր եղան՝ սպանելով Թալեաթին, «... ապա մեր օրերի խաղաղ եղեռնագործության համար ոԲր մի թալեաթն է պատասխանատվության կանչվելու...»[14]:

Այս հրապարակումներից կարելի է եզրակացնել. օտարերկրացիների մոտ, հանուն քաղաքացիություն ստանալու կորցնում ենք մեր հպարտությունը[15], ջուր ենք լցնում թշնամու ջրաղացին, այն, ինչ չկարողացան անել օտարները, հիմա մենք ենք անում և մեր երկիրը սկուտեղի վրա մատուցում նրանց: Չէ՞ որ հաղթանակը ձեռք բերելուց բացի, պետք է կարողանանք տեր լինել նրան, պահել այն, բայց մեծածավալ արտագաղթի պայմաններում արդյո՞ք հնարավոր է այդ ամենը: Իհարկե՝ ոչ: Ահա ինչու են հրապարակախոսները իրենց մշտարթուն գրչով անընդհատ բարձրաձայնում երևույթը կանխարգելելու կարևորությունը:

Այսպիսով, արդի հայ գրական մամուլը մեծ ուշադրությամբ հետևում է հայ կյանքում տեղի ունեցող խմորումներին՝ փորձելով հրապարակախոսական հոդվածներով ներազդել հասարակության համար տագնապահարույց մի շարք երևույթների վրա, այդ թվում նաև արտագաղթի՝ վերջինիս ենթադրած վտանգները կանխարգելելու, լուծման ուղիներ գտնելու համար: Հատկապես «Գրական թերթ»-ը և «Գարուն»-ը ծավալուն էջերով ներկայացնում են արտագաղթի սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական պատճառները, ինչպես նաև սակավաթիվ ազգի համար խիստ վտանգավոր հետևանքները՝ տագնապի ահազանգ հնչեցնելով, և մշտապես սևեռուն պահելով հանրության ուշադրությունը:

---

[13] Պ.Զեյթունցյան, Արտագաղթ. ինչո՞ւ և մինչև ե՞րբ, «Գարուն», 2001թ., թիվ 9, էջ 29:
[14] Ս.Չիլինգարյան, Խաղաղ եղեռն, «Գարուն», 1999թ., թիվ 2, էջ 15:
[15] Այս մասին ծավալուն հոդվածաշարով «Գրական թերթ»-ի էջերում հանդես է գալիս Գ.Կարախանյանը՝ Արտագաղթի հետագիծը, 2003թ., թիվ 14-16, 18, 20, 22, 24, 26: